

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԱՔԱՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԻՇԽԱՆԻ

ԲԱՅԻ ՍԵՌԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ, ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆՈՒՄ
(ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ժ. 02.02. <<Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն>>
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Լուսինե Սուրենի Սահակյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան ք.գ.թ., Լուսինե Ավետիքի Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի դեկտեմբերի 12-ին, ժամը՝ 15:00-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի հոկտեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

ք.գ.թ., դոցենտ Ն.Մ.Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բայի սեռի կարգը, որը բնորոշ է բայի թե՛ դիմավոր, թե՛ անդեմ ձևերին, առանձնակի կարևորություն ունի բայի խոսքիմասային, քերականական բնույթի, խնդրառության ու նախադասության կառուցվածքով պայմանավորված իրողությունների ըմբռնման, պարզաբանման ու բնութագրման հարցերի համար: Ժամանակակից թուրք լեզվաբանության մեջ կարևորվում է բայիմաստի ընթացականության, գործողության անցողականության կամ անանցողականության դրսևորումների հիմնահարցերի համակողմանի ումումնասիրությունը: Բայի սեռն իր ամբողջականությամբ ներկայանում է իմաստային, ձևաբանական և կապակցական-շարահյուսական հատկանիշներով: Քերականական այս կարգը բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տվել ինչպես թուրքագիտության, այնպես էլ հայ լեզվաբանության մեջ:

Թյուրքագետ-լեզվաբանները բայի՝ ենթակայի և խնդրի հետ ունեցած հարաբերման տեսանկյունից տվել են բայասեռի տարբեր դասակարգումներ, սակայն խնդիրը համապարփակ ներկայացնելու համար ատենախոսության մեջ հաշվի են առնվել ժամանակակից թուրք լեզվաբանների բայասեռի սահմանումները: Սույն ատենախոսության մեջ քննությունը կատարվել է ըստ բայի սեռի հետևյալ տեսակների՝ ներգործական (հիմնական) *Etken Çati*, կրավորական *Edilgen Çati*, անդրադարձ *Dönüşlü Çati*, փոխադարձ-համատեղ *İsteş Çati*, պատճառական *Ettirgen Çati*: Ատենախոսության մեջ վեր են հանվել թուրքերենի՝ վերոնշյալ բայասեռերի առանձնահատկությունները և դրանց հայերեն համարժեքները:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորվում է այն հանգամանքով, որ անցյալում և հատկապես այսօր հարևան երկրի հետ ունեցած աշխարհաքաղաքական տարաբնույթ զարգացումների պայմաններում կարևոր է թուրքերենի համակողմանի գիտելիքների ձեռքբերումը: Ուստի սույն ատենախոսության արդյունքները կարող են նյութ մատուցել ինչպես գիտական ուումնասիրություններին, հատկապես թուրքերենի բայի սեռի առանձնահատկություններն ու լեզվական նրբերանգները վերհանելուն, այնպես էլ հայ ուսանողներին և աշակերտներին՝ թուրքերենի ուուուցման գործընթացում լեզվական իրողությունների դասավանդման և ճշգրիտ համարժեքներով թարգմանություններ կատարելուն:

Ատենախոսության նպատակը

Ձեռնարկելով ժամանակակից թուրքերենի բայասեռի կազմության միջոցների քննությունը, ինչպես նաև իմաստաշարահյուսական դրսևորումներ

րի վերլուծությունը՝ փորձել ենք լուծել հետևյալ խնդիրները.

- 1) Ներկայացնել բայի սեռի մասին առկա սահմանումներն ու տեսական վերլուծությունները:
- 2) Ցույց տալ թուրքերենի բայի սեռի յուրահատկությունները՝ որոշարկելով քերականական այս կարգի ձևաբանական ու բառակազմական տարանջատման սահմանները և վեր հանել այդ տարանջատումների միասնական չափորոշիչները:
- 3) Բնութագրել բայական անդրադարձության և ոչ անդրադարձության առանձնահատկությունները:
- 4) Քննել բայի սեռի ձևաբանական, իմաստային և կիրառական օրինաչափությունները:
- 5) Ցույց տալ բայասեռի շարահյուսական (ենթակայի և խնդրի) դրսևորումները (ինչպես նաև տրամաբանական սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունը) թուրքերենի բայաձևերում և նախադասության կառուցվածքում:
- 7) Ջուզադրաբար վերլուծել թուրքերենի և հայերենի բայասեռերի ձևաբանական, իմաստակառուցվածքային և գործառական ընդհանրություններն ու տարբերությունները:

Գիտական նորույթը

Հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ է արվում համակողմանի քննության ենթարկել ժամանակակից թուրքերենի բայի սեռի կարգը՝ հիմք ընդունելով թուրք, արևմտյան, ռուսաստանյան և հայ թուրքագետ-լեզվաբանների մշակած տեսական դրույթներն ու սահմանումները, ինչպես նաև զուգադրական մեթոդի կիրառմամբ վեր հանել թուրքերենի քերականական այս կարգի դրսևորումների հայերեն համարժեքները (միաժամանակ ատենախոսության մեջ համեմատական մեթոդի կիրառմամբ ներկայացվել են թուրքերենի և թյուրքական այլ լեզուների բայասեռի կազմավորման ձևաբանական որոշ ընդհանրություններ):

Աշխատանքի մեթոդաբանությունը

Ուսումնասիրության հիմքում դրված են համեմատական, ինչպես նաև զուգադրական վերլուծության մեթոդները:

- ա) Ժամանակակից թուրքերենի բայասեռի ձևաբանական, իմաստային և շարահյուսական առանձնահատկություններն ուսումնասիրվել են համաժամանակյա մեթոդով:
- բ) Տարաժամանակյա քննության գործադրումով պարզաբանվել են ժամանակակից թուրքերենի բայ սեռի պատմականորեն կրած փոփոխություններն ու զարգացման միտումները:

գ) Ջուգադրական մեթոդի կիրառմամբ վեր են հանվել բայի սեռերի նմանություններն ու տարբերությունները թուրքերենում և հայերենում:

Աշխատանքի ժամանակագրական սահմանները

Աշխատանքն ընդգրկում է ժամանակակից թուրքերենի զարգացման ներկա փուլը: Ժամանակագրորեն ատենախոսության մեջ տեղ են գտել նաև հին թյուրքական, միջին ու նոր դարաշրջանների լեզվական փաստերի և իրողությունների համեմատական վերլուծությունները:

Աշխատանքի կիրառական նշանակությունը

Ժամանակակից թուրքերենի բայասեռի ձևաբանական, իմաստային և շարահյուսական դրսևորումների ուսումնասիրության արդյունքները կարող են ներդրվել տեսական քերականության դասընթացներում, ինչպես նաև կիրառություն գտնել թյուրքագիտական տարբեր հետազոտություններում, դասագրքերում և ուսումնամեթոդական ձեռնարկներում: Ստացված արդյունքները կարող են կողմնորոշել նաև թուրքերենից հայերեն և հայերենից թուրքերեն թարգմանություններում բայասեռի համարժեք կադապարների ընտրության հարցում:

Աշխատանքի փորձաքննությունը

Աշխատանքի հիմնական արդյունքների մի շարք դրույթներ և եզրակացություններ լուսաբանվել են «Լրաբեր հասարակական գիտությունների», «Կանթեղ», «Արևելագիտության հարցեր» և «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսներում ու հոդվածների պարբերական ժողովածուներում: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնում և երաշխավորվել պաշտպանության:

Աշխատանքի կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության հիմնական հարցադրումները, ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ թյուրքագետ-լեզվաբանների բնութագրումներն ու սահմանումները:

Առաջին գլխում՝ «Ժամանակակից թուրքերենի բայասեռի ուսումնասիրության տեսական հիմքերը», ներկայացվել է ժամանակակից թուրքերենի բայի ընդհանուր բնութագիրը, ի մի են բերվել և վերլուծության ենթարկվել թուրքերենի՝ բայի սեռի կարգի վերաբերյալ սահմանումները, վեր են հանվել բայասեռի տեսակների դասակարգման օրինաչափությունները, քննության են ենթարկվել թուրքերենի բայական անցողականությունն ու անանցողականությունը՝ հայերենի զուգադրությամբ:

Թուրքերենի բայերը, ըստ կերպի, լինում են տևական, ոչ տևական, բազմապատկական, խոնարհման հարացույցով: Բայերը կարող են հանդես գալ տարբեր՝ հաստատական, ժխտական, գործողության իրականացման կարելիության և անկարելիության ասպեկտներով: Ժամանակակից թուրքերենը, ժառանգելով հին թյուրքերենի և օսմանյան շրջանում գործածվող բայի սեռի ածանցները, այսօր ունի բայասեռի յուրահատուկ ձևեր, որոնք խոսքի շղթայում հանդես են գալիս ձևաիմաստային և շարահյուսական տարբեր դրսևորումներով:

Վերջին տարիներին թուրք լեզվաբանների՝ սեռի ավանդական սահմանումը ենթարկվում է քննադատությունների, և սեռերի քանակը տատանվում է պայմանավորված լեզվի քերականական առանձնահատկություններով, գործողության կամ եղելության մասնակիցների քանակով:

Թուրքերենում և թյուրքական մյուս լեզուներում յուրաքանչյուր սեռ՝ անդրադարձ, փոխադարձ, կրավորական և պատճառական, ունի իր հատուկ ածանցը: Լեզվաբանների մի խումբ սեռը համարում է բառակազմության տեսակ և դիտարկում որպես բայից բայ բառակազմության արդյունքում ի հայտ եկած քերականական ձև: Է. Սևորդյանը, կատարելով թյուրքական լեզուների համեմատական քննություն, հանգում է այն եզրակացության, որ բայի սեռը պատմականորեն բառակազմությունից ձևաբանություն անցումային փուլում գտնվող միջանկյալ լեզվական երևույթ է: Ըստ նրա՝ թյուրքական լեզուներում այն ի սկզբանե եղել է զուտ բառակազմական, այսինքն՝ անուն խոսքի մասից բայակազմական (*kara-ula, karalaşmak-ulağın*), մյուս կողմից՝ անցողական-անանցողական բայերի տարբերակման յուրօրինակ միջոց¹: Ն. Բասկակովի բնորոշմամբ՝ թյուրքական լեզուներում սեռերը բառակազմության տեսակներ են, և սեռի էությունն ու տեսակն արտահայտվում է արմատում՝ բայի հիմքում, և օբյեկտ-սուբյեկտային հարաբերությունները քերականորեն ստանում են հատուկ ածանցներ, որոնք կցվում են հիմնական բային²:

Լեզվաբանների մյուս խումբը սեռի որոշման հիմնական հատկանիշը համարում է գործողության ուղղվածությունը, և բայասեռը բնութագրվում է որպես շարահյուսական և իմաստային մակարդակների միավորների միջև բայով արտահայտված համապատասխանություն: Այս խումբը սեռերը քննում է ձևաբանության համատեքստում և համարում, որ դրանք միայն առանձին դեպքերում ունեն բառակազմական արժեք: Զ. Քորքմազը թուրքերենի բայի սեռի բնութագրելիս հաշվի է առնում բայիմաստի, այսինքն՝ գործընթացության գաղափարը. գործողության ոլորտ

¹Севортян Э., Аффиксы глаголообразования в азербайджанском литературном языке Москва, изд. Вост. Лит., 1962, с. 50.

²Баскаков Н., Турецкий язык, Москва, изд. Вос. Лит., 1960, с. 209.

ներքաշված՝ նրա մեջ առնված առարկա, որ կարող է լինել կամ գործողության սուբյեկտը, կամ նրա օբյեկտը³: Երկու դեպքում էլ առարկան լիովին առնված է գործընթացի մեջ, թեև բացառված չէ օբյեկտի մասնակի ներառում (օրինակ՝ *Bu ekmekten yedik.* / Այս հացից կերանք):

Նշենք, որ հայ լեզվաբանները ևս բայի սեռի բնութագրումներում կարևորում են գործողության կամ եղելության ուղղվածությունը՝ իբրև հարաբերում գործող ելակետին և առարկայական վերջնակետին, այդ հարաբերությունների քերականական վերացարկումը, այդ վերացարկման պայմաններում տրամաբանական սուբյեկտի ու օբյեկտի և քերականական ենթակայի ու խնդրի համընկնումներն ու տարբերությունները: Սեռը, որպես քերականական կարգ, կարող է ճանաչվել բայի մեջ առկա ձևային դրսևորումով, ձևային ցուցիչով: Ըստ այդմ էլ՝ միայն ձևային ցուցիչ ունեցող սեռային նշանակությունը կարող է մտցվել սեռի քերականական կարգի մեջ: Հայ լեզվաբանները սեռային քերականական արտահայտություն համարում են ոչ միայն բայական բառաձևի մեջ հանդես եկող ձևաբանական ցուցիչը, այլև նրա բացակայությունը, ինչպես և բառույթին հատուկ սեռային նշանակության պահանջով պայմանավորված կապակցությունը:

Թուրքերենի բայասեռի կարգը բնութագրելիս չի կարելի շրջանցել անցողականություն (*geçişli*) և անանցողականություն (*geçişsiz*) հասկացությունները, որոնք բայի՝ օբյեկտի հետ ունեցած հարաբերության տեսանկյունից բաժանվում են հետևյալ խմբերի՝ *ուղիղ-անցողական, անուղղակի-անցողական կամ թեք - անցողական և անանցողական*: 1. *Ուղիղ անցողական բայերը* մատնանշում են այնպիսի գործողություն, որն անմիջականորեն անցնում է առարկային: Առարկան դրվում է ուղղական կամ հայցական հոլովով: Այս խմբի բայերը ձևաբանական հատկանիշներով բաժանվում են՝ *բուն ուղիղ - անցողական՝ almak/վերցնել, yazmak/գրել և պարսճատական - ուղիղ - անցողական՝ birini sevindirmek/ուրախացնել մեկին*: 2. *Անուղղակի-անցողական կամ թեք - անցողական* բայերն ընդունում են անուղղակի խնդիրներ, հետևաբար դրանք անանցողական են՝ *O masaya yaklaşıyor./* Նա մոտենում է սեղանին: *Ben Ermenistandan dönüyorum./* Ես Հայաստանից վերադառնում եմ: 3. *Անանցողական բայերը* բաժանվում են երկու խմբի՝ *բուն-անանցողական և ածանցավոր-անանցողական*: *Բուն-անանցողական* բայերը մատնանշում են գործողության ամփոփումն իր մեջ, պայմանավորված է հենց բայի բառային նշանակությամբ, որն այս դեպքում արտահայտում է դրություն կամ ընթացք՝ *oturmak/ստտել, bakışmak/նայել*: Ածանցավոր-անանցողականները փոխադարձ, անդրադարձ կամ կրավորական սեռի բայերն են՝ *bakışmak/իրար նայել (փոխադարձ բայ)*,

³ Korkmaz Z., Türkiye Türkçesi Grameri, s. 537.

yıkanmak/վացվել (անդրադարձ բայ), *denmek*/ասվել (կրավորական բայ) և այլն:

Թուրքերենում ևս հայերենի նման բայերի անցողականությունը և անանցողականությունը քերականորեն ներկայանում են բայի և հայցական հոլովով արտահայտվող *ուղիղ խնդրի* հարաբերությամբ: Թուրքերենում տարբերակվում են երկու տեսակի անցողականություն և անանցողականություն՝ սկզբնաձևային (կամ սկզբնատիպային), երբ բայական բառույթի մեջ հանդես է գալիս նրա «բնական» (սկզբնական) վիճակը, և բայ-բառույթը հատուկ ձևակազմության չի ենթարկվում, և ձևակազմական, երբ անցողականությունը և անանցողականությունն այս կամ այն բառույթի մեջ ի հայտ են գալիս հատուկ ձևակազմությամբ: *Պատճառական, կրավորական, փոխադարձ-համարեղ և անդրադարձ սեռերի* արտահայտած անցողականությունը կամ անանցողականությունը ձևակազմական է, քանի որ այս սեռերը կազմվում են հիմնական (ներգործական) սեռից որոշակի ածանցների կցումով: Թուրքերենում կրավորական և պատճառական ածանցները հնարավորություն են տալիս անցողական բայից անանցողական, իսկ անանցողականից՝ անցողական բայաձևեր ստանալու: Օրինակ՝ *bölmek*/ բաժանել (անցողական բայ) - *bölmek*/ բաժանվել (անանցողական բայ), և հակառակը՝ *uyumak*/ քնել (անանցողական բայ)- *uyutmak*/ քնեցնել (անցողական բայ): Կախված նախադասության մեջ արտահայտած իմաստից՝ մի շարք բայեր կարող են լինել և՛ անցողական, և՛ անանցողական: Օրինակ՝ *Yolculuk iki gün sürdü.*/Ճանապարհորդությունը երկու օր տևեց (անանցողական բայ): *Çiftçi tarlayı sürdü.*/Հողագործն արտը վարեց (անցողական բայ):

Այսպիսով, սեռը, լինելով բայ խոսքի մասի հատկություն, բոլոր դեպքերում չի ներկայանում իբրև սոսկ ներքին, իմաստային կողմ, այն, ըստ առանձին նշանակությունների, ստանում է նաև քերականական արտահայտություն լեզվի քերականական միջոցների գործադրմամբ: Սեռը, բխելով բայական բառույթի էությունից, ամբողջականության մեջ ներկայանում է բառերի խոսքիմասային ներքին, քերականական-իմաստային, ձևաբանական, կապակցական-շարահյուսական հատկանիշներով: Դրանք քերականական հատկանիշներ են, ուստի և սեռն էլ քերականական կարգ է:

Երկրորդ գլխում՝ «Թուրքերենի ներգործական (հիմնական) *Etken/Yalın Çatı* սեռի իմաստաքերականական հայեցակարգը», վերլուծության է ենթարկվել սեռի, նրա տրամաբանական (ենթակա, ուղիղ խնդիր) և քերականական ակտանտների (ստորոգյալ, լրացումներ և այլն) միջև եղած փոխհարաբերությունը: Թուրքերենի բայի կազմում սեռանիշ ածանցները հաջորդում են բառակազմական և նախորդում քերականական

անաճանցներին, դերբայանիշ վերջավորություններին և հոլովական ձևայիններին: Քերականները, սեռի կարգը վերագրելով բայի կազմության բնագավառին, դիտարկում են բայի հիմքը նաև այս կամ այն սեռային աճանցով:

Թուրքերենում, բացի ներգործական (հիմնական-*Yalın çati*) սեռից, մյուս բոլոր սեռերը կազմվում են տարբեր սեռային աճանցներով: Ներգործական սեռի բայերը կազմությամբ պարզ են, որոնք էլ դառնում են հիմք այլ սեռերի բայեր կազմելու համար: Ժամանակակից թուրքերենում սեռանիշ աճանցների միջոցով ներգործական (հիմնական) բայահիմքից կազմվում են երկրորդական բայական հիմքեր: Այս սեռի քերականական նշանակությունն արտահայտվում է քերականական որոշ իրողությունների առկայությամբ: Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս ենթակայի (տրամաբանական սուբյեկտ) մի այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է որևէ առարկա, օբյեկտ: Մատնանշում են նաև մի այնպիսի գործողություն, որի տրամաբանական սուբյեկտի, քերականական ենթակայի կատարած գործողության համար պահանջվում է հայցական հոլովով դրված ուղիղ խնդիր լրացում (տրամաբանական օբյեկտ):

Ներգործական սեռի բայերի և ուղիղ խնդրի փոխհարաբերությունը վերլուծելիս ներգործական (հիմնական) սեռին վերաբերող բնութագրումները գրեթե նույնն են ինչպես հնդեվրոպական, այնպես էլ թյուրքական լեզուների համար: Այս սեռն արտահայտում է այնպիսի գործողություն կամ վիճակ, որը ծագում է բուն սուբյեկտից, կատարվում կամ իրականացվում է նրա կողմից: Զուգահրոջություններ անցկացնելով՝ նշենք, որ հայ լեզվաբանների բնութագրմամբ ներգործական սեռի բայը նույն անցողական բայն է: Այն ցույց է տալիս ուրիշ առարկայի վրա անցնող գործողություն:

Ներգործական սեռի բայերով կազմված նախադասություններում ենթական հայտնի է: Թուրքերենի քերականական նման կառույցներում ենթական կամ նշվում է, կամ արտահայտվում բային միացող դիմորոշ աճանցներով. *Annem güneşli havaları sever./Աայրս արևոտ եղանակներն է սիրում: Güneşli havaları sever./Նա) արևոտ եղանակները սիրում է:*

Ելնելով բայի և ուղիղ խնդրի կոնկրետ բառային իմաստների հետ կապված առանձնահատկություններից՝ հայ լեզվաբանության մեջ առանձնացվում են զանազան հարաբերություններ ցույց տվող ավելի փոքր ենթախմբեր: Նույն մոտեցումով կարելի է բնութագրել նաև թուրքերենի ներգործական բայ և ուղիղ խնդիր փոխհարաբերությունը՝ ա) գործողությունից փոփոխություն կրող ուղիղ խնդիր (*bardağı kırmak/* կտորել բաժակը), բ) գործողության հետևանքով մի իրադրություն մատնանշող ուղիղ խնդիր (*çocuğu sevindirmek/* ուրախացնել երեխային), գ) մի դրությունից մեկ այլ դրության անցումը մատնանշող ուղիղ խնդիր (*çocuğu yetiştirmek/* մեծացնել երեխային), դ) երբ ստեղծվում է գործողությունից (տուն կառուցել */ev yapmak*), երբ ոչնչանում է գործողությունից (*ev yıkmak/* տուն քանդել) և այլն:

Երրորդ գլխում՝ «Կրավորական սեռի իմաստակառուցվածքային և կիրառական առանձնահատկությունները», քննության են ենթարկվել թուրքերենի կրավորական սեռի կազմության հիմնական օրինաչափությունները, ինչպես նաև եղած բնութագրումներն ու սահմանումները: Կրավորական սեռը, ըստ էության, կազմվում է բայի քերականական ձևափոխությամբ. անցողական, այսինքն՝ ներգործող բայերով արտահայտվող գործողությունը կամ եղելությունը ներկայացվում է հակադարձ ուղղվածությամբ: Թուրք հետազոտողները կրավորական բայերը բնութագրում են որպես անանցողական: Հնդեվրոպական լեզուներում, ըստ ավանդական սահմանման, կրավորական սեռը հաղորդում է որևէ հոլովով չարտահայտված կամ թեք հոլովով դրված սուբյեկտից բխող գործողություն, որն ուղղված է ուղղական հոլովով արտահայտված օբյեկտին: Թուրքերենի կրավորական սեռի ածանցների ծագման հարցը դեռևս շարունակում է մնալ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Կրավորական սեռի ածանցներն են՝ *il -il -ül -ül, l-, in -in, -un, -ün, -n-* կամ *-nil (-nil, -nul, -nül)*՝ *Mektupları gönderildi./Նամակներն ուղարկվեցին: Mahalleye yeni bir market açıldı./Թաղամասի համար մի նոր խանութ բացվեց:* Կրավորական սեռի բայերը միշտ պահանջում են *n'ı*ից/*kimden, h'ı*նչից/*neden, n'ı* կողմից/*kimin* *tarafından* հարցերը:

Կրավորական սեռի բայերը նախադասության մեջ ունեն հետևյալ դրսևորումները. *Evimiz çok ucuz satıldı./Մեր տունը շատ էժան վաճառվեց: Mektupları gönderildi./Նամակներն ուղարկվեցին: Mahalleye yeni bir market açıldı./Թաղամասի համար մի նոր խանութ բացվեց:* Թուրքերենի անանցողական բայերը կրավորական սեռ կարող են ընդունել նախապես *-d (-t)-* կամ *dir-* պատճառական ածանցներ ստանալուց հետո՝ դառնալով անցողական, որից հետո կարող են ստանալ կրավորական սեռի ածանց՝ *kurumak/ չորանալ, kurutmak/չորացնել, kurutulmak/չորացվել: -L-* բաղաձայնով վերջացող բայափոխներից կրավորական սեռը կազմվում է *-in-in-un-ün*

ածանցների կցմամբ. օրինակ՝ *bulmak*/գտնել - *bulunmak*/գտնվել, *almak*/ վերցնել – *alınmak*/ վերցվել, *bölmek*/բաժանել – *bölinmek*/բաժանվել:

Կրավորական սեռը կազմվում է ոչ միայն հիմնական (ներգործական) սեռից, այլև ցանկացած այլ սեռից, եթե դրան չի խանգարում ելակետային հիմքի բառային իմաստը, սակայն կրավորական սեռին այլ սեռային ածանցներ չեն կարող միանալ: Օրինակ *öğrenmek*/սովորել, տեղեկանալ, *öğrenilmek*/սովորեցնել, տեղեկացվել, *sevindirmek*/ուրախացնել, *sevindirilmek*/ ուրախացվել: Թուրքերենի առանձին բայերը, ինչպես՝ *anlamak*/հասկանալ, *eylemek*/անել, գործել, կրավորական սեռ չունեն, և այս անանցողական բայերի կրավորական սեռը կազմվում է ոչ թե ներգործական սեռի հիմքից, այլ պատճառական սեռից՝ *anlat-il-mak*/հասկացվել, իսկ *eylemek*/անել բայը փոխակերպվում է *edilmek* կամ *olunmak* ձևերով: Կրավորական սեռի բայերը ավելի հաճախ կազմվում է այն բայերից, որոնք տարածության մեջ ցույց են տալիս շարժում, ընթացք, դրություն կամ վիճակ: Անցողական բայերի մի սահմանափակ խումբ թույլ է տալիս զուգահեռ ձևերի կազմավորում *il -il -ul -ül, l-, in -in, -un, -ün* ածանցներով՝ *görülmek* և *görünmek*/տեսնվել, *tutulmak* և *tutunmak*/բռնվել: Անանցողական բայերից ձևավորված կրավորական սեռը գործածվում է անդեմ նախադասություններում: Այս բայերը հանդես են գալիս միայն երրորդ դեմքի եզակի թիվ՝ *Bu saatte gelinir mi?/ Մի՞թե կարելի է այս ժամին գալ: Kalkalmalı./Պեպոք է վեր կենալ:*

Կրավորական սեռի բայերը հակադրվում են ներգործական և չեզոք սեռի բայերին: Եթե նախադասության մեջ ներգործական սեռով դրված ստորոգյալն իր համապատասխան վերջածանցով հուշում է, որ գործողություն կատարողը ենթական է՝ *kırdım/կոտրեցի*, ապա կրավորական սեռի բայերի համար վիճակը փոխվում է՝ *kırıldı/կոտրվեց*: Զուգադրություն անցկացնելով՝ նշենք, որ հայ լեզվաբանները ևս մատնանշում են, որ կրավորական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի ենթական՝ տրամաբանական օբյեկտը, իր վրա է կրում մեկ ուրիշ առարկայի գործողություն, որը նախադասության մեջ դառնում է ներգործող կամ միջոցի խնդիր: Հայերենից թուրքերեն թարգմանելիս կունենաք հետևյալ պատկերը՝ *Թշնամին ջախջախվեց հայոց միացյալ բանակի կողմից: /Düşman birleşmiş Ermeni ordusu tarafından ezildi./Ծառերը օրորվում էին գիշերվա քամուց: /Ağaçlar gece rüzgarından sallanıyordu. Զուգադրելով թուրքերենի կրավորական սեռը հայերենի կրավորական սեռի հետ՝ կարող ենք ասել, որ ձևաբանական*

կադապարածները համընկնում են, սակայն հայերեն կրավորական սեռով դրված նախադասությունը թուրքերեն թարգմանելիս և հակառակ պարագայում շարահյուսական մակարդակում ի հայտ են գալիս որոշ փոփոխություններ, հատկապես սուբյեկտ-օբյեկտային մակարդակում: Օրինակ՝ *Ուսուցիչը հարգվում է իր ուսանողի կողմից / Öğrenci öğrenciyi saygı duyurdu (Աշակերտի կողմից հարգվող ուսուցիչ կամ Ուսուցիչը, որին հարգում է աշակերտը): Հայրը սիրվում է որդուց կամ որդու կողմից / Çocuk tarafından sevilen baba. (Երեխայի կողմից սիրվող հայր կամ հայր, որը սիրվում է երեխայի կողմից):*

Չորրորդ գլխում՝ «Անդրադարձ և փոխադարձ սեռերի իմաստակառուցվածքային արժեքը և շարահյուսական դրսևորումները» փորձ է արվել քննել թուրքերենի անդրադարձ և փոխադարձ սեռերը: Անդրադարձ սեռը ցույց է տալիս գործողության ուղղվածություն, վերադարձը նրա կրողին՝ սուբյեկտին, գործողության կենտրոնացումը, ինքնամփոփումն այն իրականացնողի՝ սուբյեկտի մեջ: Անդրադարձությունը նաև մատնանշում է, որ գործողությունը կատարվում է սուբյեկտի կողմից հենց իր համար՝ իր հետաքրքրությունների շրջանակներում: Այսինքն՝ անդրադարձ սեռն անմիջականորեն ազդում է գործողության սուբյեկտի վրա: Այս սեռը թուրքերենում կազմվում է նույն կրավորական ածանցների միջոցով՝ -n (-m -in -un -iin) և -l (-il -il -ul -ül): Նշենք, որ անդրադարձ և կրավորական սեռերն ունեն մի շարք ընդհանրություններ: Դրանք ցույց են տալիս, որ գործողությանը ենթարկվում է մասնավորաբար գործող անձը:

Այնուհանդերձ, անդրադարձ սեռի գործողության ոլորտը զգալիորեն նեղ է, քան կրավորականինը: Թուրքերենում անդրադարձ սեռը չի կարող կրավորականի նման կազմվել ցանկացած բայից: Ձևաբանական առումով անդրադարձ սեռն ունի հետևյալ կառուցվածքը. ձայնավոր հնչյունով ավարտվող բայահիմքին -n- ածանց ավելացնելով՝ կարող է կազմվել անդրադարձ սեռի բայ: Օրինակ՝ *gizlemek/թաքցնել, gizlenmek/թաքնվել, korumak/պահպանել, պաշտպանել, korunmak/պահպանվել, պաշտպանվել, süslemek/զարդարել, süslenmek/զարդարվել:*

Կրավորական և անդրադարձ սեռերի ցուցիչների նույնականության պատճառով որոշ բայեր հանդես են գալիս ինչպես կրավորական, այնպես էլ անդրադարձ սեռի իմաստով՝ առաջացնելով բազմիմաստություն և խառնաշփոթ: Այս երևույթը տարբերակվում է միայն կոնկրետ նախադասության մեջ: Անդրադարձ բայերով կազմված նախադասություններում ենթակայի կատարած գործողությունը վերադառնում է ենթակային և ազդում նրա վրա, այնինչ կրավորական

բայով նախադասություններում ենթական իր վրա է կրում ուրիշի կատարած գործողությունը:

Եթե զուգադրենք հայերենի բայի սեռի նման դրսևորումների հետ, ապա կարող ենք ասել, որ ինչպես նկատել է Ա. Աբրահամյանը, «Ժամանակակից գրական հայերենի փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բայերը, ստանալով կրավորական *-վ-* ածանց, բոլոր դեպքերում բուն կրավորական սեռի նշանակություն չեն արտահայտում, ուստի այդպիսի ածանցումը բոլոր դեպքերում չի կարելի անվերապահորեն հայտարարել բուն կրավորական»⁴: Ինչպես հայերենում, այնպես էլ թուրքերենում կրավորական սեռի քերականական ցուցիչը հաճախ կարող է որոշակի շփոթության տեղիք տալ: Անձնական-անդրադարձ իմաստ ունեցող առանձին բայեր ձևավորվում են բառաիմաստային յուրահատուկ եղանակով: Բայի սեռային հատկանիշն արտահայտվում է *olmak* լինել բայի միջոցով, օրինակ՝ *traş olmak* սափրվել:

Առանձին անանցողական բայեր ստանալով *-(i)n* ածանցը պահպանում են իրենց անանցողական նշանակությունը՝ ձեռքբերելով գործողության հանդարտ, դանդաղ կատարման նրբերանգներ: Օրինակ՝ *uzamak* երկարել, *uzanmak* մեկնվել, ձգվել, *kalkmak* վեր կենալ, *kalkınmak* բարձրանալ, *qարգանալ*, *gezmek* զբոսնել, *gezinmek* ճեմնել:

Որոշ անցողական բայեր, բառային իմաստով պայմանավորված, ընդհանուր – անդրադարձ բովանդակություն են ստանում շարահյուսական եղանակով *kendi* (ինքը, իր) անձնական, ստացական, անդրադարձ դերանվան գործառույթ ունեցող բառերով, որոնք դրվում են համապատասխան դեմքով և հիմնականում հայցական հոլովով: Հարկավոր է նաև անդրադարձ սեռի բայերը տարբերել այն բայերը, որոնցում *-n-ian* ածանցներն ունեն բառակազմական արժեք և ոչ թե բայասեռի ցուցիչներն են: Նման բայերից են *utanmak* ամաչել, *uyanmak* արթնանալ, *tirmanmak* մագլցել, *öğrenmek* սովորել: Ներգործական սեռում համապատասխան ձև չունեն մի շարք բայեր, որոնք կազմվում են *-la+n/-le+n* ածանցով:

4.2 Փոխադարձ- համատեղ (İsteş Çatı) սեռի բայերի ձևաբանական կազմությունն ու իմաստային դրսևորումները: Թուրքագետ լեզվաբանները փոխադարձ սեռի մեջ տարբերակում են փոխադարձության և համատեղության նշանակությունը՝ գործածելով փոխադարձ-համատեղ սեռ եզրը: Թուրք լեզվաբաններն այս գործառույթները միավորում են մեկ եզրի ներքո՝ անվանելով փոխադարձ-համատեղ (*İsteş*) սեռ: Թուրքերենի և առհասարակ թյուրքական լեզուների փոխադարձ-համատեղ սեռի վերաբերյալ թեև առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ,

⁴Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1962, էջ 630-631:

այնուամենայնիվ առանձնացված չեն այս սեռի տարանջատման միասնական չափորոշիչները, իմաստային առանձնահատկությունները, բավարար չափով լուսաբանված չէ բառաքերականական ու գործառնամաստային կողմը: Թյուրքագետ-լեզվաբանները փոխադարձ սեռը դիտարկել են տարբեր տեսանկյուններից՝ բառակազմական, ձևաբանական, բառափոխական:

Փոխադարձ ոչ անդրադարձ նշանակությամբ բայերը կազմվում են անանցողական բայահիմքերից և արտահայտում են երկու կամ ավելի սուբյեկտների համատեղ, միաժամանակյա գործողություն, որը քանիցս կատարվում է սուբյեկտի կողմից: Այս սեռի ածանցները, միանալով անցողական բայական հիմքերին, ամենից առաջ փոխում են ելակետային հիմքի օբյեկտային կապերը: Փոխադարձ-համատեղ բայիմաստ կարող են ունենալ նաև տրական հոլովով լրացում ունեցող որոշ անանցողական բայեր: Տվյալ դեպքում իրականանում է որպես երկու սուբյեկտների կողմից կատարվող գործողության փոխադարձ-համատեղ իրողություն:

Համանման ածանցներով անանցողական բայերն ունեն համատեղ գործողության իմաստ: Սկզբնական հիմքերի և լրացումների համադրությունը տվյալ դեպքում չի փոխվում, և սեռային ցուցիչը հատկանշում է սկզբնական հիմքի գործողության սուբյեկտի քերականական բնութագիրը, այսինքն՝ մեկից ավելի սուբյեկտների թիվը: Թյուրքերենի անդրադարձ և փոխադարձ-համատեղ սեռերը, ըստ էության, իրենց գործառնությունով համապատասխանում են հայերենի չեզոք սեռի բայերին:

Հինգերորդ գլխում՝ «Ժամանակակից թուրքերենում պատճառականության սեռային դրսևորումները» վերլուծության են ենթարկվել թուրքերենի պատճառական սեռի ձևաբանական և շարահյուսական դրսևորումները, իմաստային նրբերանգները: Պատճառական սեռը կազմվում է անցողական և անանցողական բայերից՝ ելակետային բայի հիմքին ածանցներ ավելացնելու միջոցով: Անանցողական բայերից պատճառական սեռ կազմելիս բայը փոխարկվում է անցողականի, քանի որ բայի այդ ձևն արտահայտում է մեկ սուբյեկտի միջամտությունը մյուսի գործողության ընթացքին: Անանցողական բայերի մեծ մասի վերակազմավորումն անցողականի, իսկ որոշ անցողականներինը՝ «կրկնակի անցողականների», ըստ էության, բառակազմական իրողություն են:

Թյուրքերենում բառաձևի սահմաններում հնարավոր է մի քանի միատիպ կամ տարատեսակ սեռային ածանցների կապակցումը: Պատճառական սեռը կազմվում է մի քանի ածանցների միջոցով, որոնք ունեն տարբեր ծագում և միանում են տարբեր բայական հիմքերի՝ միևնույն բայաձևում հանդես գալով որպես պատճառի տարբեր աստիճաններ: Օրինակ՝ *Çocuk uyudu./* Երեխան քնեց: *Anne çocuşu uyuttu./* Մայրը երեխային

քնեցրեց: *Anne çocuğu dadiya uyutturdu.* Մայրը դայակին հանձնարարեց, որ քնեցնի երեխային: Թուրքերենում պատճառական սեռը ունի երեք աստիճան՝ կախված գործողությանը սյուբեկտների մասնակցության քանակից: Առաջին աստիճան՝ օրինակ՝ *kızmak* (բարկանալ, տաքանալ), *kız - dir - mak* (բարկացնել, շիկացնել, տաքացնել), երկաստիճան՝ *ye - dir - mek* (կերակրել), *ye- dir - t - mek* (կերակրել տալ), *եռասպիճան՝ çıkmak* (դուրս գալ), *çık - ar - mak* (դուրս հանել), *çık - ar - t - mak* (ստիպել դուրս հանել), *çık - ar - t - tir - mak* (հրամայել, որ ինչ-որ մեկը դուրս հանել տա, ստիպի դուրս հանել):

Ներգործականի նման այս սեռն ունի անցողական նշանակություն: Պատճառականության ածանց ստացած անցողական և անանցողական բայահիմքերը կարող են ընդունել երկրորդական պատճառական ածանցավորում: Օրինակ՝ *Telefon Idaresi, telefon kumbaralarını çaldirtmamak tedirlerini düşüne dursun.* Թող հեռախոսային վարչությունը միջոցներ կիրառի հեռախոսների գողությունը կանխելու համար:

Պատճառական ածանցով կազմված երկրորդական հիմքերը, ինչպես և բոլոր անցողական բայերը կարող են ստանալ նաև կրավորականության ածանց: Անանցողական հիմքերից կազմված երկրորդական պատճառական բայերն իրենց նույն կերպ են դրսևորում, ինչպես որ կրավորականության ածանց ստացած անցողական բայերը: *Gazetede ki habere rağmen Gökselin öldürülmediğinden emindi.* Հակառակ թերթի տեղեկատվությանը՝ նա համոզված էր, որ Գյորսելը սպանված չէ:

Կրավորականության ածանց կարող է միանալ պատճառականության երկու ածանց ունեցող բայահիմքերին: *Bana kalırsa, bütün dersler Almanca okutulmalıdır.* Իմ կարծիքով, (եթե ես եմ որոշելու) բոլոր դասերը պետք է դասավանդվեն գերմաներեն:

Պատճառական սեռը մեկնաբանելու համար կարևոր է նաև հաշվի առնել այս սեռի դրսևորած բառային և քերականական նշանակությունների հարաբերակցությունը: Բոլոր պատճառական ձևերը հստակ տարբերվում են սկզբնական բայահիմքերից օբյեկտային կապերի ոլորտում, քանի որ երկրորդական հիմքերին հնարավորություն են տալիս համադրվելու լրացումների այնպիսի տեսակներին, որոնք անհնար են սկզբնական հիմքերի դեպքում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժամանակակից թուրքերենի բայասեռի համակարգն իր ձևաբանական, իմաստային, շարահյուսական առանձնահատկություններով հանդես է բերում կերպավիճակային զանազան իմաստներ: Թուրքերենում

առանձնացվում է բայի սեռի հինգ տեսակ՝ ներգործական (հիմնական), կրավորական, անդրադարձ, փոխադարձ-համատեղ, պատճառական: Վերջին չորս սեռերը կազմվում են սեռային ածանցներով, իսկ հիմնական (ներգործական) սեռի բայերը կազմությամբ պարզ են:

2. Թուրքերենի բայասեռերը, ըստ օբյեկտի հետ հարաբերության, լինում են անցողական և անանցողական: Բայասեռերի տարբերակման հիմքում ընկած է ուղիղ խնդիր պահանջելու հատկությունը, այսինքն՝ ենթակայի և ուղիղ խնդրի փոխհարաբերությունը: Ընդհանուր առմամբ, ներգործական (հիմնական) սեռի բայերն արտահայտում են սկզբնաձևային անցողականություն, պատճառական սեռի բայերը՝ ձևակազմական անցողականություն, իսկ փոխադարձ-համատեղ, անդրադարձ և կրավորական սեռի բայերը՝ ձևակազմական անանցողականություն: Ըստ այդմ էլ՝ օբյեկտի հետ ունեցած հարաբերության տեսանկյունից թուրքերենի բայերը բաժանվում են երեք խմբի՝ *ուղիղ-անցողական, կրավորական-անցողական, անանցողական*:
3. Քանի որ թուրքերենի *պատճառական, կրավորական, փոխադարձ-համատեղ և անդրադարձ* սեռերը կազմվում են *հիմնական* (ներգործական) սեռի բայափոխերին համապատասխան ածանցների կցումով, ապա դրանց արտահայտած անցողականությունը կամ անանցողականությունը ձևակազմական է:
4. Թուրքերենում սեռային տեսակները կազմվում են մեկ կամ մեկից ավելի ածանցներով, որոնք բայի մեջ հաջորդում են բառակազմական և նախորդում բառափոխական ձևույթներին: Սեռային ածանցների միջոցով հիմնական բայափոխից կազմում են երկրորդական բայական փոխեր:
5. *Ներգործական/հիմնական սեռը (Etken Çati)* բայի ելակետային ձևն է, որից զանազան ածանցների օգնությամբ կազմվում են մյուս սեռերը: Ներգործական բայը ցույց է տալիս ենթակայի կողմից կատարված այնպիսի գործողություն կամ վիճակ, որը ծագում է բուն սուբյեկտից, կատարվում կամ իրականացվում է նրա կողմից:
6. *Կրավորական սեռը (Edilgen Çati)* կազմվում է անցողական ու որոշ անանցողական բայափոխերի և կրավորական ածանցների կցման միջոցով: Կրավորականը, ըստ էության, բայի քերականական ձևափոխությամբ ստացվող սեռ է: Սեռային այս փոփոխությամբ անցողական՝ ներգործող բայերով արտահայտվող գործողությունը կամ եղելությունը ներկայացվում է հակադարձ ուղղվածությամբ՝ ի հակադրություն անցման գաղափարի: Կրավորականության ածանցը բնութագրվում է որպես անանցողական: Ժամանակակից թուրքերենում կրավորական սեռը կազմվում է բաղաձայն հնչյունով վերջացող

բայափիմքերին կցելով *il -il -ul -iil*, ինչպես նաև *l-* բաղաձայնով վերջացող բայափիմքերին՝ *m -in, -un, -iin* ածանցները: Ձայնավոր հնչյունով վերջացող բայափիմքերի դեպքում կրավորական սեռը կազմվում է *n-* կամ *nil (-nil, -nul, -niil)* ածանցները բայափիմքին կցելով: Անանցողական բայերից կրավորական կազմելու դեպքում նախ այդ բայերը *-d(-t)-* կամ *dir-* պատճառական ածանցների օգնությամբ վերածվում են անցողականի, և հետո նրանց միանում է կրավորական սեռի ածանցը: Անանցողական բայերից ձևավորված կրավորական սեռը կիրառվում է անդեմ նախադասություններում: Կրավորական սեռն ընդհանուր առմամբ կազմվում է տարածության մեջ շարժում, ընթացք, դրություն կամ վիճակ ցույց տվող բայերից:

7. *Անդրադարձ սեռը (Dönüşlü Çati)* ցույց է տալիս գործողության ուղղվածություն, վերադարձ դեպի սուբյեկտը: Անդրադարձությունը մատնանշում է սուբյեկտի կողմից մասնավորապես իր համար՝ իր հետաքրքրությունների շրջանակներում կատարվող գործողություն: Այս սեռը, կազմվելով կրավորական սեռի նույն ածանցներով՝ *-n(-in, -in, -un, -iin)* և *-l(-il, -il, -ul, -iil)* և ցուցաբերելով որոշակի ընդհանրություններ, այնուհանդերձ, ունի կիրառության զգալիորեն ավելի նեղ ոլորտ, քան կրավորականը. անդրադարձ սեռը կրավորական սեռի նման չի կարող կազմվել ցանկացած բայից: Անուն խոսքի մասերից ևս հնարավոր է կազմել անդրադարձ սեռի նոր բայեր: Անդրադարձ բայերով կազմված նախադասության մեջ ենթակայի կատարած գործողությունը վերադառնում է ենթակային և ազդում նրա վրա, այնինչ կրավորական բայով նախադասություններում ենթական իր վրա է կրում ուրիշի կատարած գործողությունը: Անդրադարձ սեռի բայերը դասակարգվում են հետևյալ հիմնական խմբերով՝ *անձնական-անդրադարձ, ընդհանուր-անդրադարձ* և *անուղղակի-անդրադարձ* սեռի բայեր: Թուրքերենի անդրադարձ սեռն իր գործառույթով համապատասխանում է հայերենի չեզոք սեռին:

8. *Փոխադարձ-համապեղ (İsteş Çati)* սեռն արտահայտում է երկու կամ ավելի սուբյեկտների կողմից միասին կամ միմյանց նկատմամբ կատարվող գործողություն: *Փոխադարձ-համապեղ* սեռի բայերը կազմվում են բայափիմքին միացող *-ş-* և *(-iş -iş, -uş, -iüş)* ածանցների միջոցով: Ձայնավորով ավարտվող բայափիմքերին կցվում է *-ş-*, իսկ բաղաձայնով վերջացող բայափիմքերին՝ *-ş-* և *(-iş- iş, -uş, -iüş)* ածանցները: *Փոխադարձ-համապեղ* սեռի բայերը բաժանվում են երկու խմբի՝ փոխադարձ-անդրադարձ և փոխադարձ-ոչ անդրադարձ: *Փոխադարձ-անդրադարձ* բայերը ձևավորվում են անցողական հիմքերից և արտահայտում են սուբյեկտի ու օբյեկտի փոխգործողություն:

Փոխադարձ - ոչ անդրադարձ նշանակության բայերը կազմվում են անանցողական հիմքերից և արտահայտում երկու կամ ավելի սուբյեկտների համատեղ, համաժամանակյա գործողություն: Թուրքերենի փոխադարձ-համատեղ բայերն իրենց գործառույթով համապատասխանում են հայերենի *չեզոք* սեռի բայերին:

9. *Պատճառական-հարկադրական* սեռը ցույց է տալիս մի սուբյեկտի կողմից այլ սուբյեկտի պարտադրվող կամ մյուս սուբյեկտի հարկադրանքով կատարվող գործողություն: Նախադասության մեջ ենթական հիմնականում ստորոգյալի հաղորդած գործողության կատարողն է, սակայն *պատճառական* բայով կազմված նախադասություններում ենթական առավելապես հանդես է գալիս ոչ թե որպես գործողություն կատարող, այլ կատարել տվող: *Պատճառական* սեռը կազմվում է անցողական և անանցողական բայերից՝ համապատասխան ածանցների կցման միջոցով: Անանցողական բայը փոխարկվում է անցողականի, քանի որ բայի այդ ձևն արտահայտում է մեկ սուբյեկտի միջամտությունը մյուսի գործողությանը: *Պատճառական* սեռը ներգործականի նման ունի անցողական նշանակություն և անանցողական բայերից ձևավորվելիս դրանք դարձնում է անցողական: Իսկ պատճառական սեռն անցողական բայերից կազմվելիս դրանք դարձնում է երկակի անցումային, այսինքն՝ ունենում է երկու օբյեկտ՝ տրական-հայցական կամ էլ ուղղական հոլովներով: Թուրքերենում պատճառական- հարկադրական սեռը ձևավորվում է *-dir, -dir, -dur, -dür (-t -tir, -tir, -tur, -tür), -l, -r, -ır (-ir, -ur, -ür), -ır (-ir, -ur, -ür), -ar, -er, -ut (-it, -ut, -iit)* ածանցների միջոցով՝ արտահայտելով տարբեր նրբերանգներ՝ հրամանից մինչև ներողամտություն: Այդ պատճառով այսպիսի բայերի հայերեն թարգմանությունը կատարվում է ինչպես պատճառական *-ացն, -եցն, -ցն* ածանցներով, այնպես էլ մի շարք բայերի համադրությամբ՝ «ստիպել», «հրամայել», «կարգադրել», «թույլ տալ»: Ժամանակակից հայոց լեզվում պատճառական ածանցով կազմված բայերն իրենց գործառույթով ներգործական սեռի բայեր են:
10. Ժամանակակից թուրքերենում սեռանիշ ածանցների միջոցով հիմնական բայահիմքից կազմում են երկրորդական բայական հիմքեր, որոնք մի կողմից բնորոշում են նախադասության անդամների կապը՝ ենթակալրացում, մյուս կողմից արտահայտում են գործողություն կատարողների՝ սյուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱՎՈՒՄՆԵՐԸ

1. Զաքարյան Շ. «Բայական անցողականության և անանցողականության կարգերը ժամանակակից թուրքերենում, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀԳԱԱ Գիտություն հրատ.» Երևան 2012, հ. 2-3, էջ 315-323:
2. Զաքարյան Շ. «Ժամանակակից թուրքերենի անդրադարձ սեռը, Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան 2012, հ. 4, էջ 209-215:
3. Զաքարյան Շ. «Ժամանակակից թուրքերենի կրավորական սեռի իմաստագործառական առանձնահատկությունները», Կանթեղ.«Ասողիկ» հրատ., 4 (61) (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2014, էջ 69-77:
4. Զաքարյան Շ. «Թուրքերենի պատճառական-հարկադրական սեռի (*Ettirgen Çatı*;) ձևաիմաստային դրսևորումները, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), ԵՊՀ հրատ.» Երևան, 2016, հ.11, էջ 218-228 (համահեղինակ Լ. Սահակյան):
5. Զաքարյան Շ. «Փոխադարձ-համատեղ սեռի բայերի ձևաբանական կազմությունն ու իմաստային դրսևորումները», Լեզուն և Գրականությունը գիտական իմաստության ժամանակակից հարացույցում, ԵՊՀ, «Լուսակն» հրատ. 8, Երևան, 2017, էջ 85-92:
6. Զաքարյան Շ. «Թուրքերենի և հայերենի բայասեռի հիմնահարցերը (սահմանումների ընդհանրություններն ու տարբերակումները), Բանբեր Վ. Բոյուսովի Անվան Պետական Համալսարանի, Լեզվաբանություն և Բանասիրություն, «Լինգվա» հրատ. 1(60), Երևան, 2022, էջ 133-145:

Закарян Шушаник Ишхановна

Морфологические, синтаксические и семантические особенности глагольной категории залога в современном турецком языке (в сопоставлении с армянским)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 “Общее и сравнительное языкознание (тюркология)”

Защита состоится 12-го декабря, 2022г., в 15:00 часов на заседании специализированного совета ВАК по лингвистике 019, действующего в Институте языка имени Гр. Ачаряна НАН РА

Диссертация посвящена анализу смысловых, морфологических и синтаксических особенностей глагольной категории залога в современном турецком языке. Опираясь на предлагаемую турецкими лингвистами классификацию, в рамках исследования уделено особое внимание формам глагола действительного, страдательного, возвратного, взаимно-совместного и

каузативного залогов. В диссертации подчеркивается значимость сложной системы категории залога в турецком, приводятся ныне фигурирующие определения и теоретические выкладки, определены линии морфологического и словообразовательного разграничения категории залога, даны единые критерии разграничений, проведен анализ отдельных свойств категории залога турецкого и других тюркских языков, отмечены их общие и отличительные черты, выявлена специфика возвратности и невозвратности глаголов, изучены морфологические, смысловые и применительные закономерности и особенности категории залога, лексико-грамматический и функционально - семантический аспекты, синтаксические проявления – взаимоотношения грамматического подлежащего и дополнения, логического субъекта и объекта в глагольных формах. Категория залога современного турецкого языка своими морфологическими, семантическими и синтаксическими особенностями находит весьма разнообразные проявления в речи. Методом сравнительного анализа исследованы морфологические и семантико-структурные особенности, сходства и различия глагольных залогов турецкого и армянского языков, а также создана основа для наиболее точного перевода данного языкового явления в процессе изучения турецкого языка.

Диссертация состоит из введения, пяти глав, заключения и списка использованной литературы. Во введении излагаются основные цели и задачи исследовательской работы. В заключении диссертации обобщены и изложены основные выводы проведенного исследования.

Приводится список использованной в работе научной литературы.

В первой главе – *“Теоретические основы изучения глагольной категории залога в современном турецком”* – дается общее описание отличительных черт турецкого глагола, анализируются сформулированные учеными-тюркологами характеристика и определения глагольной категории залога. Отмечено, что в случае образования данной категории по схеме *глагол от глагола*, ее можно квалифицировать как морфологическое явление, находящееся на стыке словообразования и морфологии; по схеме *глагол от именной части речи* – как явление словообразовательное, а при помощи средств дифференциации переходных и непереходных глаголов – как морфологическое. В сопоставлении с армянским подчеркивались понятия переходности и непереходности, наилучшим образом передающие взаимоотношения между глаголом и его объектом.

Во второй главе – *“Семантико-грамматическая концепция действительного (основного) залога турецкого языка”* – дается характеристика функций действительного залога турецкого языка. Изучены нашедшие выражение в семантике глагола взаимоотношения выполненных субъектом и объектом (подлежащее, прямое дополнение) действий в действительном залоге.

В третьей главе – *“Семантико-структурные и применительные особенности страдательного залога (Edilgen Çati)”* – методом сопоставления с армянским исследованы морфологические, синтаксические и семантические реализации страдательного залога из основ переходных и непереходных глаголов турецкого языка. Приводятся эквивалентные формы армянского языка.

Четвертая глава – *“Семантико-структурная значимость и синтаксическое применение возвратного (Dönüşlü Çati) и взаимно-совместного (İsteş Çati)*

залогов” – состоит из двух подглав: “Возвратный залог (*Dönüşlü Çati*): характеристика, типы и особенности применения” и “Морфологическая структура и смысловые проявления глаголов взаимно-совместного залога (*İşteş Çati*)”. Рассматриваются структурные особенности возвратного залога и специфика его проявлений на синтаксическом уровне. Приводятся также характеристика и классификация возвратного залога (собственно-возвратный, общевозвратный и косвенно-возвратный). Рассматриваются структурные, семантические и синтаксические аспекты взаимно-совместного залога. Значения взаимности и совместности отличаются в зависимости от исходной формы глагола.

В пятой главе – “Каузативный залог в современном турецком языке и его проявления (*Ettirgen Çati*)” – дана характеристика и определение каузативного залога турецкого, его функции на морфологическом и синтаксическом уровнях. Методом сопоставительного анализа, на равнозначных примерах показано, что каузативный залог турецкого в армянском языке соответствует глаголам, образованным каузативными аффиксами. Отмечено, что семантический охват глаголов каузативного залога варьируется от приказа до снисхождения.

Zakaryan Shushanik Ishxan

Morphologic, Syntactic and Semantic Peculiarities of Verb Voice in Modern Turkish
(as compared with the Armenian language)

Dissertation defense for Academic Degree of Candidate of Philology, specialty 10.02.02 “General and comparative linguistics., (Turkic Studies), is scheduled on December 12 2022, at 15:00 p.m, at the session of HAC Specialized Academic Council on Linguistics 019, NAS RA Hr. Acharyan Institute of Language.

The dissertation focuses on the semantic, morphological and syntactic peculiarities of the verb category of voice in the Modern Turkish language. Basing on the classification proposed by Turkish linguists, the active, passive, reflexive, reciprocal-mutual and causative voices have become the subject of the research. The special value of the complex system of the Turkish voice category has been underscored; the now existing definitions and theoretical insight provided; the ways of morphological and word forming delineation of voice category shown; uniform criteria for demarcation set; characteristic features of voice category in the Turkish and other Turkic languages analyzed; their common and differentiating features pointed out; verb transitivity and intransitivity specified; morphological, semantic and usage regularities and peculiarities of voice category, as well as lexical-grammatical and functional-semantic aspects investigated; syntactical manifestations, such as interrelations of grammatical subject and object, of logical subject and object in verb forms described. The category of voice with its morphological, semantic and syntactic peculiarities manifests a variety of uses in speech. Comparative method is used a) to examine the morphological and semantic-structural features, similarities and differences in the voice categories of the Turkish and Armenian languages; b) to lay the groundwork for the most precise translation of said linguistic phenomenon in the process of learning the Turkish language.

The dissertation includes introduction, five chapters, conclusions and bibliography. The introduction outlines the main goals and tasks of the research. In the conclusions, the key findings of the work performed are summed up. The bibliography provides a complete list of the sources used during the investigation.

Chapter One, *Theoretical Background of Studying the Verb Category of Voice in Modern Turkish*, provides a general outline of the Turkish verb, analyzes the characteristics and definitions of the verb category of voice formulated by scholars in Turkic Studies. It is noted that, when a verb category is formed from a verb, it can be considered as a morphological phenomenon; in case of a verb formed from other parts of speech – as a word forming, and in case of transitive-intransitive conversion – as a morphological phenomenon. In juxtaposition with the Armenian language, the notions of transitivity and intransitivity have been underscored as best conveying the verb-object interrelations.

Chapter Two, *Semantic-Grammatical Concept of the Active (Basic) Voice in the Turkish Language*, provides the characteristics of the functions of the Turkish active voice. The subject-object relations, reflected in a verb in the active voice, are studied.

Chapter Three, *Semantic-Structural and Usage Peculiarities of the Passive Voice (Edilgen çatı)*, studies the morphologic, syntactic and semantic realizations of the passive from stems of the Turkish transitive and intransitive verbs in comparison with those of the Armenian language. Equivalent forms in Armenian are provided.

Chapter Four, *Semantic-Structural Value and Syntactic Usage of the Reflexive (Dönüşlü Çatı) and Reciprocal-Mutual (İşteş Çatı) Voices*, includes two subchapters: a) *Reflexive Voice (Dönüşlü Çatı); the Characteristic, Types, and Peculiarities of Usage*; and b) *Morphologic Structure and Semantic Manifestations of Verbs of Reciprocal-Mutual Voice (İşteş Çatı)*. The structural peculiarities of the reflexive voice and its manifestations at the syntactical level have been examined. The characteristics and classification of the reflexive voice (self-reflexive, general-reflexive and indirectly-reflexive) is provided too. Structural, semantic and syntactic aspects of the reciprocal-mutual voice are examined. The meanings of reciprocity and mutuality differ depending on the initial form of the verb.

Chapter Five, *Modern Turkish Causative Voice (Ettirgen Çatı) and Its Manifestations*, focuses on the characteristics and definitions of the Turkish causative voice and its functions at the morphological and syntactic levels. Comparative analysis is used to show through equivalent examples that the Turkish causative voice corresponds to Armenian verbs formed by adding causative affixes. Semantically, the causative voice embraces a diverse range from command to indulgence.